ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 56(1), 2022 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ԱԳՐՈԶԲՈՍԱԾՐՋՈՒԹՅԱՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում օգտագործվել են նկարագրական, վերլուծական, հարցադրումների, կանխատեսումների, զուգորդության կամ համեմատության, փորձարարության, մոդելավորման մեթոդները:

Ագրոզբոսաշրջությունը կարող է համարվել էկոլոգիական, ճանաչողական, արկածային, գաստրոնոմիական, առողջարանային, ուխտագնացության և այլ զբոսաշրջային ուղղությունների հետ: Այդ ոլորտի զարգացմամբ փոխվում է բնակչության վերաբերմունքը բնական և պատմամշակութային հուշարձանների, շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ: Այն դառնում է ներգնա զբոսաշրջության հետաքրքրության առարկա ու նպաստում է գյուղական բնակավայրում զբոսաշրջության, փոքր ձեռներեցության և հարակից սպասարկման ենթակառուցվածքների զարգացմանը: Անհրաժեշտ է օգտագործել գյուղատնտեսության նոր տեխնոլոգիաներ, աշխատանք տանել սակավջերմասեր պտղաբուծության, որոշ հացահատիկների, ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնման, եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծման համար, որի շնորհիվ կնվազի մարզի լեռնային ու հարթավայրային շրջանների միջև սոցիալ տնտեսական մակարդակների տարբերությունները:

Բնական, կլիմայական և տեխնածին առանձնահատկությունների շնորհիվ Արագածոտնի մարզում ագրոտուրիզմը էապես տարբերվում է այլ մարզերից: Այդ հենքի վրա մարզի ագրոզբոսաշրջությունը կարելի է զարգացնել երեք ուղղություններով՝ դասական ագրոզբոսաշրջություն, ագրոզբոսաշրջություն՝ որպես ամառանոցային հանգիստ, ագրոզբոսաշրջություն բնության գրկում:

Առաջիկա տարիներին մարզի ագրոզբոսաշրջության զարգացման համար կարևորում ենք հետևյալ խնդիրները՝ ագրոզբոսաշրջության կլաստերների ձևավորում, առաջավոր փորձի տարածում, ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր փորձարարական բնակավայրերի շրջանում, ագրոզբոսաշրջության հիմնական արդյունքների կանխատեսում, ագրոզբոսաշրջություն կազմակերպելու գիտելիքահենք հնարավորությունների ստեղծում և շուկայի զարգացում: Այսպիսով, Արագածոտնի մարզում առանձնացնում ենք հինգ (Աշտարակ, Ապարան, Ծաղկահովտ, Բյուրական, Թալին) ագրոզբոսաշրջային կլաստերներ: Մարզի տարածքում հանգստի ենթակառուցվածքները թույլ են զարգացած ռելիեֆի առանձնահատկությունների, կլիմայական պայմանների և մայրաքաղաքի հարևանությամբ գտնվելու պատճառով:

Զբոսաշրջության զարգացման ծրագրում պետք է, նախատեսել վարկային միջոցներ՝ ցածր տոկոսադրույքներով: Կարելի է համադրել նաև գաստրոտուրիզմի և տարածաշրջանի խոհանոցի գրավչության գործոնը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2022.56.1.054

***Keywords*:** resettlement, economic development, settlements classification, unequal distribution, natural factor, anthropogenic factor.

* E-mail: v.grigoryan@ysu.am

Ներածություն: Ագրոզբոսաշրջության դերը տարեցտարի մեծանում է, քանի որ աշխարհում քաղաքական, տնտեսական լարվածությունը, առավել ևս համավարակի տարածումը խիստ սահմանափակել են արտագնա զբոսաշրջության պահանջարկը: Միևնույն ժամանակ գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրման, համատարած մեքենայացման, ինչպես նաև աշխատանքի սեզոնայնության պատճառով, գյուղական բնակավայրերում աշխատուժի զբաղվածության խնդիր է առաջանում: Ուստի ներգնա զբոսաշրջության զարգացումը հնարավոր ուղղություններով դառնում է անհրաժեշտություն: Ագրոզբոսաշրջությունը կարող է համադրվել զբոսաշրջության այնպիսի ուղղությունների հետ, ինչպիսիք են էկոլոգիականը, արկածայինը, գաստրոնոմիականը, առողջարանայինը, ճանաչողականը, ուխտագնացությունը:

Օգտագործվել են նկարագրական, վերլուծական, հարցադրումների, կանխատեսումների, զուգորդության կամ համեմանմանության, գիտափորձի կամ էքսպերիմենտի, մոդելավորման մեթոդներ:

Ուսումնասիրության մեթոդիկան: Արագածոտնի մարզն աչքի է ընկնում գեղատեսիլ բնությամբ, ալպյան մարգագետիններով, թթվահամ և քաղցրահամ սառնորակ աղբյուրներով, անձեռակերտ կիրճերով, ջրվեժներով ու ջրավազաններով, լճերով, քարանձավներով, ինչպես նաև վանական համալիրներով, բերդերով, եկեղեցիներով, կամուրջներով, խաչքարերով:

Ագրոզբոսաշրջության զարգացման բնապահպանական, սոցիալական և տնտեսական արդյունքները: Ագրոզբոսաշրջության զարգացմամբ փոխվում է բնակչության վերաբերմունքը բնական ու պատմամշակութային արժեքների, շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ, քանի որ դառնում են ներգնա զբոսաշրջության հետաքրքրության առարկա ու նպաստում են գյուղական բնակավայրերում զբոսաշրջության, փոքր ձեռնարկատիրության, հատկապես սպասարկման ենթակառուցվածքների զարգացմանը: Այսպես, ավանդաբար մեծ հետաքրքրություն կա Արագածոտն մարզի Օշական, Սաղմոսավան, Բյուրական, Ուջան, Դաշտադեմ, Աղձք, Տեղեր, Փարպի, Արուճ և այլ բնակավայրերի գեղատեսիլ բնության, պատմամշակութային հուշարձանների, ինչպես նաև Քասախի կիրճի, Ապարանի ջրամբարի, Արքաշենի և Ամբերդի ջրվեժների, Քարի լճի նկատմամբ: Պակաս կարևոր չէ նշել հանրահայտ Ամբերդ ամրոցի, Երևան–Ապարան ավտոմայրուղու 27 *կմ* հատվածում հայկական տառերի պուրակի, Սաղմոսավանքի վանական համալիրի առաքելությունը: Ճանապարհների ու հարակից տարածքների բարեկարգումը կավելացնի այցելուների թիվը, հետևաբար և՛ Անտառու, Բյուրական, Արտաշավան և՛ Սաղմոսավան գյուղերի բնակչության սպասարկման ծառայություններից սպասվող եկամուտները [1]:

Չի բացառվում նաև Արտաշավան–Ամբերդ ամրոց ճանապարհի հարևանությամբ լքված, ապաբնակեցված Նիգատուն և Լուսաղբյուր գյուղերի ներառումը երթուղիների մեջ: Դրանք ունեն բնակլիմայական բարենպաստ պայմաններ, և եթե վերականգնվ են, նոր կյանք ստանան:

Հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում կտրուկ ավելացել է Օշական–Աշտարակ–Մուղնի–Օհանավան–Սաղմոսավանք–Հայկական տառեր–Ամբերդ ամրոց–Քարի լիճ երթուղով այցելուների թիվը: Աստիճանաբար ստեղծվում են սպասարկման ենթակառուցվածքներ, որոնք լրացուցիչ աշխատատեղեր են այս բնակավայրերի համար [2]:

Արագածոտն մարզն աչքի է ընկնում ռելիեֆի բարձրությունների մեծ տարբերություններով՝ Արագածի, Ապարանի և Թալինի տարածքների լեռնային ու հարթավայրային հատվածներ և Աշտարակի տարածաշրջանի կիրճեր:

Որպես կանոն լեռնային շրջանները սոցիալ-տնտեսական զարգացման առումով զիջում են հարթավայրային ու նախալեռնային շրջաններին, որոնք աչքի են ընկնում միավոր տարածքից պտղաբուծության ու բանջարաբուծության բարձր բերքատվությամբ ու կաթնատու, կաթնամսատու տավարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, իսկ լեռնային շրջանները՝ մանր եղջերավոր անասնապահությամբ, հացահատիկի, կերաբույսերի մշակությամբ: Տեղին է նշել, որ հարթավայրային շրջաններից ստացված եկամուտը շուրջ 10 անգամ գերազանցում է լեռնային շրջանների եկամուտներին, որոնք էլ լեռնային շրջանների բնակչության աղքատության գլխավոր պատճառն են [3]: Հետևաբար, անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները՝ գյուղատնտեսական նոր տեխնոլոգիաների ներդրման, սակավ ջերմասեր պտղաբուծության, որոշ հացահատիկների, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնման ու եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծման համար: Այս առումով եկամտաբեր է լեռնային շրջաններում զբոսաշրջության զարգացումը բնական բարենպաստ կլիմայական պայմանների, բնական հուշարձանների, պատմամշակութային արժեքների ու արհեստների, խոհանոցի բազայի վրա:

Արագածոտն մարզի լեռնային գյուղերում ձևավորվել է առանձնահատուկ կենսակերպ: Ինչպես գիտենք, գյուղերում կյանքն աշխուժանում է աշնանը, երբ գյուղացին պահեստավորում է բերքը, ավարտվում են գյուղատնտեսական աշխատանքները, և նախապատրաստվում ձմեռային հանգստի: Աշնան վերջին գյուղ են վերադառնում արտագնա աշխատանքի մեկնած տղամարդիկ, կազմակերպվում են ընտանեկան տարբեր բնույթի միջոցառումներ, խնջույքներ և ամենակարևորը՝ հարսանիքներ:

Որպես կանոն ագրոզբոսաշրջությունը աշխարհում զարգանում է գրեթե նույն սկզբունքներով ու մեթոդներով, սակայն պայմանավորված տարածաշրջանների բնական ու մարդածին առանձնահատկություններով՝ դրանք որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Այս բոլորով հանդերձ մարզի ագրոզբոսաշրջությունը կարելի է զարգացնել երեք ուղղություններով.

1. դասական ագրոզբոսաշրջություն,
2. ագրոզբոսաշրջությունը՝ որպես ամառանոցային հանգիստ,
3. ագրոզբոսաշրջությունը բնության գրկում:

Դասական ագրոզբոսաշրջությունը որոշակի նպատակով ներառում է ի սկզբանե նախատեսված երթուղիներ գյուղական տարածքներում: Այն նախատեսում է զբոսաշրջություն բնության գրկում, այցելություն պատմամշակութային հուշարձաններ, ալկոհոլային, հատկապես գինու և ճաշատեսակների համտեսություն, փառատոնների, ազգագրական, երգ ու պարի, նմանատիպ այլ միջոցառումների մասնակցություն, գյուղական աշխատանքի ու կենցաղի ծանոթացում ու անմիջական մասնակցություն [3]:

Հայաստանում ագրոզբոսաշրջության զարգացման ու ծավալման համար անհրաժեշտ է բազմազանեցնել ծառայությունները և անտեսել վարչատարածքային միավորների սահմանափակումները՝ երթուղիների ճանաչողական ու

գեղագիտական լիարժեքությունը ապահովելու նպատակով: Ագրոզբոսաշրջությունը որպես ամառանոցային հանգիստ է դիտվում, երբ քաղաքների բնակիչները ավելի քան մեկ ամիս ժամանակահատվածով իրենց երեխաների, ծնողների կամ հարազատների ամառանոցային հանգիստը կազմակերպում են նախապես ընտրված գյուղական բնակավայրերում, որտեղ մատչելի գնով կարող են տրամադրվել հյուրատուն, վրան, հարմարավետ տնակ և այլն: Առայժմ գյուղական վայրերում հանգիստը գերազանցապես անցկացվում է հարազատների, բարեկամների, մտերիմների, ծանոթների տանը [3]:

Արկածային բնույթի ագրոզբոսաշրջությունը ներառում է գյուղական վայրերում և դրանց մերձակա տարածքներում ձիավարժություն, որս, ձկնորսություն, ժայռամագլցում, արշավներ և այլ կարգի միջոցառումներ: Արշավային զբոսաշրջությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է մասնագիտական կրթություն: Սովորաբար զբոսաշրջության այս տեսակներն ապահովում են բավականին բարձր եկամտաբերություն, իսկ այցելուները մատուցված ծառայությունների դիմաց համեմատաբար թանկ են վճարում: Մեր երկրում զբոսաշրջության այս տեսակը սկսել է զարգանալ վերջին տասնամյակում և ունի լավ հեռանկար [3]:

Ագրոզբոսաշրջության ներուժի գնահատման դրույթները [3]



Արագածոտն մարզում առանձնանում են Ապարանի ջրամբարը և Քարի լիճը, Կարբիի, Աշտարակի զբոսաշրջային կենտրոնները: Զբոսաշրջային առումով լայն հնարավորություններ ունեն Արագած լեռան լանջերին տեղաբաշխված գյուղական բնակավայրերը:

Ագրոզբոսաշրջության զարգացման կարևոր նախապայմաններից է զբոսաշրջիկների և այցելուների ռեկրեացիայի բազմազանեցումը: Գյուղական տարածքներում զբոսաշրջության տարբեր ձևերի՝ առողջարանային, գաստրոնոմիական, արկածային, ճանաչողական, էկոլոգիական, հոգևոր և այլն, համատեղման շնորհիվ ապահովվում է հանգստի լիարժեք հնարավորություն: Ուստի զբոսաշրջային կլաստերների ձևավորման համար պետք է հաշվի առնել վերոնշյալ զբոաշրջային ձևերի զարգացման պայմանները և ներուժը: Այսպիսի մոտեցման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել հիմնավորված կանխատեսել ագրոզբոսաշրջության զարգացման հիմնական հնարավորություններն ու դրա ցուցանիշները [4]:

Առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում մարզի տարածքում զբոսաշրջային երթուղիները: Զբոսաշրջիկները և այցելուները սովորաբար շարժունակ են և սիրում են հանգիստը կազմակերպել գյուղական տարածքներում կամ նրա սահմաններից դուրս, հետաքրքիր տեսարժան վայրերում, շրջագայելով և այլն: Այս նկատառումներից ելնելով՝ կարևոր է տարածքների ագրոզբոսաշրջային գնահատումը: Այն կարելի է իրականացնել ներքոհիշյալ գծապատկերում տրված սխեմայի օգնությամբ:

Ըստ գծապատկերի՝ ավելի որոշակի ու հրապուրիչ է դառնում Արագածոտն մարզի ագրոզբոսաշրջության զարգացման ներուժը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդհանրապես մարզի զբոսաշրջային ներուժը դեռևս հեռու է լիարժեք ու արդյունավետ օգտագործելուց: Առաջիկա տարիներին մարզի ագրոզբոսաշրջության զարգացման համար կարևորվում են հետևյալ խնդիրները.

- ագրոզբոսաշրջության կլաստերների ձևավորում,
- առաջավոր փորձի առավելությունների տարածում,
- ագրոզբոսաշրջության զարգացման նախագծում փորձարարական բնակավայրերի շրջանակում,
- ագրոզբոսաշրջության հիմնական արդյունքների կանխատեսում,
- ագրոզբոսաշրջություն կազմակերպելու գիտելիքահենք հնարավորությունների ստեղծում և շուկայի զարգացում:

Վերջին երկու տարիներին, պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով և պատերազմական իրավիճակով, խաթարվել է ոչ միայն արտագնա, այլ նաև ներգնա զբոսաշրջության հնարավորությունների ուսումնասիրությունը: Այնուհանդերձ, նախորդ տարիների ձևավորված օրինաչափությունների, ինչպես նաև վերջին մեկ տարում կատարված հարցումների ու ուսումնասիրությունների արդյունքում հաջողվել է ձևավորել ագրոզբոսաշրջության զարգացման հիմնական ցուցանիշների պատկերը: Ըստ գծապատկերի, առաջարկում ենք Արագածոտն մարզի ագրոզբոսաշրջության հիմնական կլաստերները: Կլաստերների ստեղծման նպատակով՝ անհրաժեշտ է միավորել ագրոզբոսաշրջային ծառայություններ իրականացնող սուբյեկտները, որի համար հիմք են բնակավայրի մասնագիտացումը, հեռավորությունները, գործառույթների բնորոշ և ընդհանուր գծերը, համագործակցության հնարավորությունները:

Այսպես. Արագածոտնի մարզում առանձացնում ենք հինգ՝ Աշտարակի, Ապարանի, Ծաղկահովտի, Բյուրականի, Թալինի ագրոզբոսաշրջային կլաստերներ: Պետք է նշել, որ կլաստերների ձևավորումը որոշակիորեն խթանվում է միջազգային կազմակերպությունների՝ մեր տարածաշրջանում իրականացվող ծրագրերով, իսկ պետությունը, ինչպես նաև տեղական կազմակերպությունները կողմից կլաստերային քաղաքականություն գրեթե չեն իրականացնում:

Ագրոզբոսաշրջային կլաստերների ստեղծմանը և կայացմանը կարող է օժանդակել ծառայությունների զարգացումը: Հատկապես կարևոր է գյուղական բնակավայրերում այցելուների, զբոսաշրջիկների համար միջոցառումների կազմակերպումը՝ տոներ, իրադարձություններ, խաղեր, արշավներ, հանդիպումներ, այցելություններ և այլն: Կլաստերների ձևավորումից հետո անհրաժեշտ է գնահատել կլաստերի մեջ ներառված բնակավայրերի հանգստի կազմակերպման գործոնները և ներուժը:

Արագածոտնի մարզի ագրոզբոսաշրջության կլաստերների բնութագիրը (ըստ 2019 թ., հրապարակումների և 2020 թ. հարցումների տվյալների) [2, 3]

Կլաստերի անվանումը, առավել բնորոշ բնակավայրերը	Զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժի հիմնական գործոնների գնահատումը (1–5) բալ						Զբոսաշրջիկներ ընդունելու տարիների ներուժը. մարդ
	պատմա-մշակու-թային	բնական միջավայրի գրավչու-թյուն	հանգստի ենթա-կառուց-վածք	գյուղական կոլորիտ և կենցաղ	էկո-տուրիզմի հնարավո-րություն	գաստրո-տուրիզմի	
Աշտարակ	5	3	2	2	1	3	18700
Օշական	5	4	4	2	1	3	1950
Փարպի	4	3	2	3	2	3	1450
Մուղնի	5	1	2	2	1	4	330
Կարբի	2	4	4	4	2	3	505
Օհանավան	5	5	3	2	2	3	600
Սաղմոսավան	5	5	1	1	2	2	390
Աղձք	5	1	1	2	2	2	80
Աշտարակ	4,5	3,25	2,4	2,25	1,6	2,9	4105
Բյուրական	3	4	4	3	4	3	2200
Տեղեր	4	3	1	4	3	3	70
Արուճ	5	2	1	3	2	3	180
Ուջան	2	3	4	2	2	3	950
Բյուրական	3,5	3	2,5	3	2,75	3	3400
Ապարան	3	3	1	3	3	3	750
Ջրամբար	2	4	4	1	3	1	660
Եղիպատրուշ	3	2	1	3	2	2	150
Քուչակ	1	2	1	3	3	3	120
Երնջատափ	2	2	3	2	2	2	350
Ապարան	2	2,6	2,0	2,4	2,6	2,2	2030
Ծաղկահովիտ	1	3	1	3	3	2	200
Ալագյազ	2	1	1	4	2	3	110
Հնաբերդ	2	2	1	3	3	3	135
Մելիքգյուղ	2	2	1	3	3	3	140
Ծաղկահովիտ	1,75	2	1	3,25	2,75	2,75	585
Թալին	4	2	1	3	1	3	750
Դաշտադեմ	5	2	1	4	1	3	185
Աշնակ	3	1	1	4	2	4	240
Ակունք	2	3	2,25	3,35	3,75	3,25	125

Արագածոտն մարզի զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժի գնահատման համար առաջարկվում են հետևյալ գործոնները՝ պատմամշակութային, բնական միջավայրի գրավչություն, հանգստի ենթակառուցվածքներ, գյուղական կոլորիտ և կենցաղ, էկոտուրիզմի հնարավորություններ և գաստրոտուրիզմ (տե՛ս աղյուսակ):

Կլաստերների զբոսաշրջային ներուժը գնահատելու և զբոսաշրջիկներին գիշերակացով ապահովելու թիվը կանխատեսելու համար կիրառել ենք աղյուսակում տրված գործոնների հնարավորությունները: Պատմամշակութային գործոնի դեպքում հաշվի է առնվել գյուղական բնակավայրի տարածքում առկա պատմամշակութային հուշարձանները, պատմական կարևոր դեպքերը, հանրահայտ մարդիկ: Այս և մյուս գործոնները գնահատվել են 5-բալային համակարգով: 5 բալ տրվել է, երբ գործոնը ունի շատ բարձր ցուցանիշ, 4 բալ՝ բարձր ցուցանիշ, 3 բալ՝ միջին, 2 բալ՝ միջինից ցած, 1 բալ՝ գործոնի թույլ արտահայտված լինելու դեպքում: Արագածոտն մարզում ուսումնասիրված 25 բնակավայրերից 7-ը ունեն շատ բարձր, 3 բնակավայրեր՝ բարձր ցուցանիշ: Գլխավորապես դրանք տեղաբաշխված են Աշտարակի կլաստերում: Նշանավոր են Աշտարակի Կարմրավոր, Ծիրանավոր եկեղեցիները, 17-րդ դարի կամուրջը, ակադեմիկոս Սիսակյանի և գրող Պերճ Պռոշյանի տուն-թանգարանները, Մուղնիի Ս. Գևորգ, Ս. Հովնանավանք, Սաղմոսավանքի համալիրները, Հայկական տառեր պուրակը, Փարպիում՝ Ղազար Փարպեցու գերեզմանը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, Աղձքի դամբարաններն ու կիկլոպյան ամրոցները և այլն: Նշանավոր են Թալինի բազիլիկ, Եղիպատրուշի ու Տեղերի եկեղեցիները, Դաշտադեմի ամրոցը, Արուճի պատմամշակութային հուշարձանները:

Բնական միջավայրի գրավչությամբ գերազանցապես աչքի են ընկնում Արագածի լանջերին ու Քասախի և նրա վտակների մերձակա տարածքներում տեղաբաշխված բնակավայրերը: Առանձնահատուկ գրավչություն ունեն Քասախի, Արքաշենի կիրճերը, Քարի լիճը, Բյուրականի, Ապարանի ու Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերի հարևանությամբ անտառային զանգվածները, որոնք ապահովում են մարդկանց հանգիստը ոչ աշխատանքային օրերին:

Հանգստի ենթակառուցվածքները թույլ են զարգացած՝ պայմանավորված ռելիեֆի առանձնահատկություններով, կլիմայական պայմաններով և մայրաքաղաքի հարևանությամբ գտնվելով: Վերջին տարիներին փոքր հյուրատներ ու հանգստյան տներ են կառուցվել Երևան–Թալին (հատկապես Ուջան), Երևան–Ապարան (հատկապես Կարբի, Օհանավան) ճանապարհների հարևանությամբ, Բյուրականում: Բացի դրանից, գյուղական բնակավայրերում կան վարձակալությամբ տներ, որոնք տրամադրվում են զբոսաշրջիկներին, այցելուներին, որը լրացուցիչ եկամտի աղբյուր է ծառայում: Այդպիսի տներ են տրամադրվում Բյուրական, Անտառուտ, Փարպի, Դաշտադեմ, Օշական և այլ բնակավայրերում:

Տեղին է նկատել, որ պետք է մշակել մեր հանրապետության ագրոզբոսաշրջության զարգացման ծրագիր, ըստ որի՝ նախատեսել վարկային միջոցներ ցածր տոկոսադրույքներով: Գյուղական միջավայրը և կենցաղավարության գործոնն արժանի են ուշադրության: Հարյուրամյակներ և նույնիսկ հազարամյակներ շարունակ հայն աչքի է ընկել իր հյուրասիրությամբ և հյուրընկալությամբ,

բայց զբոսաշրջության տեսանկյունից, այսինքն՝ որպես եկամտի աղբյուր, առայժմ անելիքները շատ են: Անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել գյուղական միջավայրի հրապուրիչ ու գրավիչ կողմերը, առավել զանգվածային դարձնել տոնախմբությունները, ծեսերը և նմանատիպ միջոցառումները: Անհրաժեշտություն է նաև դրանք հարմարեցնել սոցիալական, սեռային ու տարիքային տարբեր խմբերի պահանջներին [5]:

Էկոզբոսաշրջային հնարավորություններն ագրոզբոսաշրջության առավել գրավիչ գործոններից է:

Քաղաքաբնակների համար չափազանց հետաքրքիր է մասնակցել բերքահավաքի, անասունների խնամքի աշխատանքներին: Գրավիչ ու հաճելի է ուտելու բանջարներ, վայրի պտուղներ ու սունկ հավաքելը: Քաղաքաբնակների հետաքրքրություններն ու ցանկությունները հաշվի առնելով՝ գյուղացին իր հմտություններն ու գիտելիքները պետք է փոխանցի նրանց:

Գաստրոտուրիզմի և տարածաշրջանային խոհանոցի գրավչության գործոնը առանձնահատուկ տեղ ունի ագրոզբոսաշրջության մեջ: Ճաշատեսակները, պահածոները, աղցանները և սննդի այլ տեսակները խոհանոցային արվեստին պետք է այդ տարածքին բնորոշ ձևերով ներկայացնել-գրանցել հյուրընկալվողների տպավորությունները: Կարելի է կազմակերպել համտեսներ, պատրաստման մրցույթներ: Այս առումով մարզը պետք է օրինակ վերցնի Հայաստանի այն տարածաշրջաններից, որտեղ տեղի են ունենում ամենամյա փառատոն-տոնախմբություններ՝ խորովածի, մրգի, գաթայի, գինու, հարիսայի և այլն [5]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Արագածոտն մարզում ագրոզբոսաշրջության զարգացումը կլաստերներով, տարբեր միջոցառումների ընդգրկմամբ ունի որոշակի նշանակություն և կխթանի մարզի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանը:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Արագածոտնի մարզում զգալի է ագրոզբոսաշրջության զարգացման ներուժը: Կարծում ենք՝ բացահայտված հիմնախնդիրների լուծման և ագրոզբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է.

- մարզի զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա մշակել ագրոզբոսաշրջային արդյունք՝ ագրոզբոսաշրջային տարբեր աշխատանքների կազմակերպմամբ, ներառելով պատմամշակութային, սպորտային, արկածային, էկոլոգիական և այլ բաղադրիչներ, հաշվի առնելով գյուղական բնակավայրերի հնարավորությունները,
- հրատապ է օրենսդրական դաշտի բարելավումը: Անհրաժեշտ է մշակել ՀՀ գյուղական զբոսաշրջության զարգացման համալիր ռազմավարական ծրագրեր, որոնցում կվերլուծվեն մարզի զբոսաշրջային ռեսուրսները, առկա վիճակը, զարգացման հիմնախնդիրները՝ հետագա քայլերը մշակելու համար,
- մարզի սպասարկման ենթակառուցվածքները թույլ են զարգացած: Կարևոր են այս առումով արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման գործում տարբեր միջազգային դրամաշնորհների ներգրավումը, պետական աջակցությունը,
- մարզում մարքետինգի գործոնը չափազանց թույլ է: Անհրաժեշտ է ՀՀ զբոսաշրջային պաշտոնական կայքէջում, սոցիալական հարթակներում ներկայացնել մարզի ագրոզբոսաշրջային ծառայությունները: Պետք է մշակել

զբոսաշրջային բրենդ, որը կարտացոլի մարզի զբոսաշրջային հիմնական գրավչությունները, ինչը կնպաստի, որ մարզը տեղ գտնի զբոսաշրջային շուկայում,

• մարզում բավարար չէ զբոսաշրջային տեղեկատվությունը: Անհրաժեշտ են զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակներ, զբոսաշրջային գրքույկների, քարտեզների հրատարակում,

• զբոսաշրջությունը պետք է նպաստի կայուն զարգացմանը, ուստի կարևոր են շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծումը, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանումն ու դրանց ներառումը զբոսաշրջության ծրագրերի մեջ,

• մարզի ագրոզբոսաշրջության զարգացման խոչընդոտներից են ճանապարհների անբարեկարգ վիճակը, տեղեկատվական վահանակների բացակայությունը, որոնք թույլ չեն տալիս բնակավայրերը ընդգրկել զբոսաշրջային երթուղիներում,

• զբոսաշրջության զարգացումը կնպաստի մարզի եկամտի ավելացմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Ուսումնասիրությունները փաստում են, որ գյուղերում շատ են մարդիկ, ովքեր պատրաստ են իրենց հարկի տակ հյուրընկալել զբոսաշրջիկների, առաջարկել ագրոզբոսաշրջության տարբեր տեսակներ, էքսկուրսիաներ դեպի բնական ու պատմամշակութային հուշարձաններ, սակայն ներդրումների զգալի խնդիրներ կան: Անհրաժեշտ է նաև անցկացնել տեղեկատվական և վերապատրաստման դասընթացներ,

• տարբեր երկրների փորձը վկայում է, որ ագրոզբոսաշրջության զարգացման համար կաևոր նշանակություն ունեն ոլոտի հասարակական միավորումները, ասոցիացիաները: Ուստի անհրաժեշտ է ստեղծել ֆերմերների, ագրոզբոսաշրջությամբ զբաղվող այլ կազմակերպությունների շահերը ներկայացնող ագրոզբոսաշրջային միավորումներ:

Այսպիսով, վերը նշված հիմնախնդիրների լուծումը հնարավորություն կընձեռի առկա ռեսուրսների հենքի վրա Արագածոտն մարզում զարգացնելու ագրոզբոսաշրջությունը և զբոսաշրջության այլ տեսակներ:

Ստացվել է՝ 06.10.2021
Գրախոսվել է՝ 10.01.2022
Հաստատվել է՝ 14.04.2022

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Վ.Վ., Թովմասյան Գ.Ռ. *Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները*: Երևան (2021), 304 էջ:
2. *Արագածոտնի մարզի 2017–2025 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարություն:* https://www.arlis.am
3. Ավետիսյան Ս.Ս. և ուրիշներ, *Ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունների գնահատումը ՀՀ մարզերում (ՀՀ Լոռու և Տավուշ մարզերի օրինակով)*: Երևան (2021), 140 էջ:
4. Մարտիրոսյան Լ.Մ. *Էկոզբոսաշրջությունը Հայաստանում*: Վանաձոր (2018), 288 էջ:
5. Григорян В.В., Мирзоян Ц.О. *Виды путешествий в агротуризме. Современные проблемы и технологии в сфере сервиса, туризма, гостиничного дела, государственного и муниципального управления. Сборник материалов I Всероссийской научно-практич. конференции аспирантов и молодых ученых с международным участием*. Ростов-на-Дону (2017).

В. В. ГРИГОРЯН

ВОЗМОЖНОСТИ ФОРМИРОВАНИЯ АГРОТУРИСТИЧЕСКИХ КЛАСТЕРОВ В МАРЗЕ АРАГАЦОТН

Резюме

Агротуризм является одним из наиболее быстро развивающихся направлений туризма, т.к. позволяет в относительно короткие сроки окупить инвестиции на его развитие.

Марз Арагацотн, имеющий богатые природные ресурсы, культурное наследие, региональную кухню и традиции, служит базой для формирования агротуристических кластеров. Здесь принимается во внимание также и развитие других видов туризма. В статье дана характеристика кластеров, а также оценка туристского потенциала марза Арагацотн. Предложены мероприятия, в результате осуществления которых будет обеспечиваться развитие агротуризма марза Арагацотн.

Агротуризм можно рассматривать вместе с экотуризмом, познавательным, гастрономическим, оздоровительным, паломническим и др. видами туризма. С его развитием меняется и отношение населения к охране природных и историко-культурных памятников, а также к охране окружающей среды.

Агротуризм становится предметом интереса для въездного туризма, способствует развитию туризма в сельских местностях, развитию малого бизнеса, особенно в сфере сервиса. Использование новых технологий в сельском хозяйстве, расширение других видов деятельности, альтернативных источников дохода приведет к выравниванию социально-экономических различий между населением горных и равнинных областей марза.

В силу природно-климатических и рукотворных особенностей агротуризм в марзе Арагацотн существенно отличается от других регионов. При этом возможны три направления развития агротуризма марза: классический агротуризм, агротуризм как дачный отдых, агротуризм с элементами отдыха на природе.

Для развития агротуризма марза в ближайшие годы нами были выделены следующие задачи: формирование агротуристических кластеров, применение преимуществ передовых технологий, проектирование развития агротуризма в экспериментальных районах, прогнозирование основных результатов агротуризма, создание возможностей для его организации на базе полученных знаний.

Таким образом, в марзе Арагацотн выделяют 5 агротуристических кластеров: Аштарак, Апаран, Цахкаовит, Бюракан, Талин. На территории марза слабо развита инфраструктура отдыха в силу особенностей рельефа, климатических условий и близости столицы. Необходимо разработать программу развития агротуризма, в соответствии с которой предусмотреть заемные средства с низкой процентной ставкой. Также в деле развития агротуризма необходимо отметить фактор гастрономической привлекательности региона.

V. V. GRIGORYAN

OPPORTUNITIES FOR THE FORMATION OF AGROTOURISM CLUSTERS IN THE ARAGATSOTN REGION

Summary

Agrotourism is one of the fastest growing areas of tourism. With its natural conditions, monuments, regional customs and cuisine, Aragatsotn Region is a basis for the formation of agrotourism clusters. Other types of tourism are also taken into account here. For the development of tourism in Aragatsotn, it is important to assess the tourism potential. The characteristic of clusters was presented. Possible measures as a result of which agrotourism will develop in Aragatsotn Region are proposed,.

Agrotourism can be considered like ecological, educational, adventure, gastronomic, wellness, pilgrimage and other other types of tourism. With the development of agrotourism, the attitude of the population to natural, historical and cultural monuments, as well as environmental protection is changing. It becomes an object of interest for inbound tourism and contributes to the development of tourism, small business and related service infrastructures in rural areas. It is necessary to use new agricultural technologies, creation of alternative sources of income, as a result of which differences in socio-economic levels will decrease between the mountainous and lowland areas of the region.

Due to natural and human characteristics of Aragatsotn, agrotourism development here differs from other territories. On this basis, agrotourism can be developed in three directions in Aragatsotns: classic agrotourism, agrotourism as a form of summer vacation, agrotourism with elements of nature-based tourism

For the development of agrotoursim in the region of Aragatsotn in the coming years we consider the following priority problems: formation of an agrotourism cluster, dissemination of the benefits of best practices, designing the development of agrotourism in the framework of experimental settlements, forecast of the main results of agrotourism, creation of knowledge-based opportunities for organizing agrotourism and market development.

Thus, we distinguish five agrotourism clusters in Aragatsotn: Ashtarak, Aparan, Tsakhkaovt, Byurakan and Talin. The recreation infrastructure in the region is poorly developed due to the terrain features, climatic conditions and location next to Yerevan, the capital city of Armenia. It is necessary to develop a tourism development program, according to which loans credit at low rates will be provided. The factor of gastro tourism and the attractiveness of the cuisine of the region in terms of agrotourism development are possible as well.